

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱՎՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ՄԵՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆԶԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-Ը ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես Մերի Մանուկյանս, 2020 թվականի փետրվարի 1-ից աշխատելով որպես ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության փորձագետ, կատարել եմ հետևյալ աշխատանքները.

> Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվական հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» N 1441-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող 2019-2020 թվականների գործողությունների ծրագրի 14-րդ կետով սնանկության համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով Արդարադատության նախարարությանը տրված հանձնարարականի համատեքստում՝

> ներկայացրել եմ առաջարկություններ օրենսդրության կատարելագործման վերաբերյալ,

> իրականացրել եմ պետական մարմինների կողմից ստացված իրավական ակտերի նախագծերի փորձաքննության, որի արդյունքում նախապատրաստել եմ եզրակացություններ իրավական փորձաքննության ենթարկված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ, մասնավորապես՝ փորձաքննել եմ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, «Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի

նախագիծը և այլ նախագծեր, ՀՀ ԱԺ պատգամավորների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ուղարկված նախագծեր, կառավարության որոշումների, ինչպես նաև այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծեր, ընդհանուր առմամբ, թվով՝ 120 գրություն:

Բացի վերոգրյալը իրականացրել են նաև այլ աշխատանքներ, մասնավորապես՝

- > Պատասխանել են հասարակական կազմակերպություններից, պետական մարմիններից ստացված ընթացիկ գրություններին:
- > Պատասխանել են քաղաքացիների կողմից ուղարկված գրություններին:

Հարգանքով՝



ՄԵՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

04.08.2020թ.